

Հաստատված է
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ
 ամբիոնի 31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)
 Ամբիոնի պետի ժ/պ _____ Հ.Խաչատրյան
 31.08.2020թ.

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Ընտանիքում բռնության կանխարգելման իրավական հիմքերը
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Մազիստրատուրա, առկա ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ	Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն E-mail: qreakan@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Դ.Թումասյան (ի. գ. թ., դոցենտ) E-mail: davidtumasyan@gmail.com
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՍՅԱԿ	1-ին կուրս, 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	մազիստրատուրա

ԿՐԵԴԻՏՆԵՐ	3 (երեք)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	<p>«Ընտանիքում բռնության կանխարգելման իրավական հիմքերը» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 30 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունք, 54 ժամ ինքնուրույն աշխատանք:</p> <p>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով:</p>
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական իրավունք», «Քրեաբանություն» և այլ դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են ընտանիքում բռնության կանխարգելմանն ուղղված միջազգային և ազգային օրենսդրությունը, ընտանիքում բռնության տեսակները, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների տեսակները, այդ անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինները և կառույցները, դրանց գործառույթները և այլ հարցեր:

<p>ՆՊԱՏԱԿ</p> <p>ԽՆԴԻՐ/ՆԵՐ</p>	<p>Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ ընտանիքում բռնության կանխարգելման միջազգային և ազգային օրենսդրության, ընտանիքում բռնության տեսակների, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների, այդ անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինների և կառույցների, դրանց առանձին լիազորությունների, ընտանիքում բռնության ենթարկված անձանց սոցիալական աջակցության, նրանց մասնակցությամբ քննչական գործողությունների առանձնահատկությունների, ընտանիքում բռնության կանխարգելման վերաբերյալ:</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել ընտանիքում բռնության հասկացությունը (միջազգային և ազգային իրավական ակտերին համապատասխան), դրա դեմ պայքարի պատմությունը և զարգացման միտումները, • ներկայացնել ընտանիքում բռնությանը վերաբերող միջազգային իրավական կարգավորումը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները, • ներկայացնել ընտանիքում բռնությանը վերաբերող ազգային իրավական կարգավորումը, • ուսումնասիրել ընտանիքում բռնության տեսակները, դրանց հատկանիշները, մեկնաբանությունը, հարաբերակցությունը բռնության այլ տեսակների և դրսևորումների հետ, • ուսումնասիրել ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման առանձնահատկությունները և հետևանքները, • ուսումնասիրել ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինները և կառույցները, դրանց գործառույթները, • ուսումնասիրել ընտանիքում բռնության ենթարկված անձանց տրամադրվող աջակցությունը և դրա տեսակները, • ներկայացնել ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինների և կառույցների համագործակցությունը ՀՀ-ում, • ներկայացնել ընտանիքում բռնության կանխարգելման հասկացությունը և առանձնահատկությունները, • ներկայացնել ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ վարվեցողության կանոնները և առանձնահատկությունները, • ներկայացնել ընտանիքում բռնության ենթարկված անձանց սոցիալական աջակցությունը, • ներկայացնել ընտանիքում բռնության ենթարկված անձանց մասնակցությամբ քննչական գործողությունները:
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՑԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p><i>Կարողանա՝</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. ներկայացնել ընտանիքում բռնությունը որպես բռնության տարատեսակ և մեկնաբանել դրա առանձնահատկությունները, 2. ուրվագծել ընտանիքում բռնության դեմ պայքարի միջազգային կարգավորումները և դրանց առանձնահատկությունները, 3. թվարկել ընտանիքում բռնության դեմ պայքարին վերաբերող ազգային իրավական ակտերը, 4. տարբերել ընտանիքում բռնության տեսակները և դրանց դրսևորման ձևերը,

	<p>5. ուրվագծել ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքներն ու պաշտպանությունը,</p> <p>6. ներկայացնել ընտանիքում բռնության ենթարկված անձանց սոցիալական աջակցությունը,</p> <p>7. պարզաբանել ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների տեսակները,</p> <p>8. թվարկել ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինները և կառույցները, դրանց գործառույթները,</p> <p>9. ներկայացնել ընտանիքում բռնության կանխարգելումը ՀՀ-ում:</p>
--	---

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
Հիմնական	<p>ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ, ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ</p> <ol style="list-style-type: none"> 1. Մարդու իրավունքների 1948թ.-ի համընդհանուր հռչակագիր 2. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966 թ. միջազգային դաշնագիր 3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թ. միջազգային դաշնագիր 4. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին 2011թ.-ի ԵՄ կոնվենցիա 5. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1951թ.-ի եվրոպական կոնվենցիա 6. Երեխայի իրավունքների մասին 1989թ.-ի կոնվենցիա 7. Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրություն 8. Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին 1980թ.-ի կոնվենցիա 9. Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին ԵՄ-ի 2007թ.-ի կոնվենցիա 10. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1993թ.-ի կոնվենցիա 11. Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի 1979 թվականի դեկտեմբերի 17-ի կանոնագիրք 12. Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ ՄԱԿ-ի 1984թ.-ի կոնվենցիա 13. Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ Կոնվենցիայի կամընտիր արձանագրություն 14. Հանցագործության զոհ և վկա երեխաների արդարադատության հարցերի վերաբերյալ ՄԱԿ-ի 2005թ.-ի Մոդելային օրենք 15. Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների (Բանաձև 2005/20) 16. ՀՀ սահմանադրություն 17. ՀՀ քրեական օրենսգիրք 18. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք 19. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք 20. ՀՀ ընտանեկան օրենսգիրք

21. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 13.12.2017թ.-ի ՀՀ օրենք
22. «Դատախազության մասին» 17.11.2017թ.-ի ՀՀ օրենք
23. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 05.05.1998թ.-ի ՀՀ օրենք
24. «Սոցիալական աջակցության մասին» 17.12.2014թ.-ի ՀՀ օրենք
25. ՀՀ վարչապետի 28.12.2018թ.-ի «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» N1685-Ս որոշում
26. ՀՀ կառավարության 10.07.2018թ.-ի «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհուրդ ստեղծելու, խորհրդի ձևավորման կարգը և գործառույթները հաստատելու մասին» N786-Ն որոշում
27. ՀՀ կառավարության 29.03.2019թ.-ի «Ընտանիքում բռնության ենթարկվածների ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները, ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված ապաստարանների ֆինանսավորման պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ և 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1069-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 364-Ն որոշում
28. ՀՀ կառավարության 29.03.2019թ.-ի «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը սահմանելու մասին» N 333-Ն որոշում
29. ՀՀ կառավարության 10.10.2019թ.-ի «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» N1381-Ն որոշում
30. ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի «Առողջությանը պատճառված վնասի ծանրությունը պարզելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննության իրականացման կարգը և տարբեր վնասվածքների հետևանքով առաջացած աշխատունակության կայուն կորստի տոկոսները հաստատելու մասին» N 860-Ն որոշում
31. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.11.2018թ.-ի «Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի ծրագիրը և կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 119-Ն հրաման
32. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.11.2018թ.-ի «Ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև հաշտեցման կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N 120-Ն հրաման
33. ՀՀ առողջապահության նախարարի 29.11.2019թ. «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար անհատույց առաջնային բժշկական օգնության կազմակերպման, բռնության արդյունքում բժշկական օգնության դիմած անձանց վերաբերյալ տեղեկության գրանցման և հաղորդման կարգը, ընտանեկան բռնության դեպքում բժշկական պայմանագրի ներդիրը և ընտանեկան բռնության ենթարկված և դրա արդյունքում մարմնական, հոգեկան և վերարտադրողական խանգարումներ/ վնասվածքներ ստացած անձանց վերաբերյալ գրանցամատյանը հաստատելու մասին» N3177-Ս հրաման

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

34. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ
35. Արզումանյան Ս., Գրին Է. Իրավաբանական հոգեբանություն: Երևան, Զանգակ-97, 2004:

	<p>36. Առաքելյան Ս.Վ. Կանանց իրավական պաշտպանությունը բռնությունից: Երևան, 2001:</p> <p>37. Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները/ Ա. Ղամբարյան, Դ. Թումասյան. Եր., «Սկետչ-Սթայլ» ՍՊԸ, 2015:</p> <p>38. Երեխաների նկատմամբ բռնության դրսևորման ձևերը ՀՀ-ում. Երևան, 2014:</p> <p>39. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Երևան, ԵՊՀ հրատ., 2007:</p> <p>40. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Երևան, ԵՊՀ հրատ., 2009:</p> <p>41. Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված. Որակական հետազոտություն. Ջեկույց, Երևան, 2017:</p> <p>42. Հունանյան Ռ.Դ. Բռնությունը քրեական իրավունքի մեջ (իրավահամեմատական վերլուծություն ՀՀ և ՌԴ օրինակով): Ատենախոսություն, Երևան, 2011:</p> <p>43. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով սահմանված չափանիշների տեսանկյունից ՀՀ քրեական օրենսդրության վերլուծություն. Երևան, 2017:</p> <p>44. Նալչաջյան Ա.Ա. Սոցիալական հոգեբանություն: Երևան, 2004:</p> <p>45. Борисов В.И., Кунц В.Н. Преступления против жизни и здоровья: вопросы квалификации. Харьков, 1995:</p> <p>46. Борзенков Г.Н. Квалификация преступлений против жизни и здоровья. М., Зерцало, 2006:</p> <p>47. Викленко В., Галюкова М. Уголовно – правовой анализ понятия «Вред здоровью» // Уголовное право. 2007. N 1:</p> <p>48. Колпакова Л.А. Насилие в семье. М., 2009:</p> <p>49. Макаров А.Ю. К вопросу о классификации телесных повреждений по проектам УК России//Проблемы обеспечения личной безопасности граждан. М.: Акад. МВД РФ, 1995:</p> <p>50. Насилие и его влияние на здоровье: доклад о ситуации в мире/ Под ред. Э.Г. Круга и др. М: Весь мир, 2003:</p> <p>51. Наумов А.В. Российское уголовное право: курс лекций; в 3т. Т.2: Особенная часть М., 2007:</p> <p>52. Сердюк Л.В. Насилие: криминологическое и уголовно-правовое исследование, М., 2002:</p> <p>53. Шарпов Р.Д. Преступное насилие. М.: Юрлитинформ, 2009:</p> <p>54. “Domestic Violence”, Legal Dictionary, www.legal-dictionary.thefreedictionary.com/Domestic+Violence</p>
Լրացուցիչ	<p>1. Авдеев М.И. Преступления против личности и уголовно-правовая терминология // Правоведение. 1979. № 2:</p> <p>2. Аветисян С.С. Проблемы разграничения преступного от не преступного поведения, Ереван, 2011:</p> <p>3. Антонян Ю.М., Самовичев Е.Г. Неблагоприятные условия формирования личности в детстве, М, 1983:</p> <p>4. Землюков С.В. Уголовно-правовые проблемы преступного вреда. Новосибирск: Изд-во Новосиб. ун-та, 1991:</p>

		<p>5. Караулов В.Ф. Преступления против жизни и здоровья // Уголовное право России, Учебник, Особенная часть / Отв ред Б. В. Здравомыслов М., Юрист, 1996:</p> <p>6. Ковалев М.И. Правовые проблемы защиты жизни, здоровья и генетического Достоинства человека.- Екатеринбург: Изд-во УрГЮА, 1996:</p> <p>7. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (постатейный)/ Отв. ред. Л.Л. Кругликов, М., Волтере Клувер, 2005:</p> <p>8. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. 4-е изд., перераб. и доп./ Отв. ред. А.И. Рапог, М., ТК Велби, Проспект, 2006:</p> <p>9. Шарапов Р., Коновалов А. Понятие вреда здоровью в условиях правовой дезориентации судебно-медицинской экспертизы живых лиц // Уголовное право . 2007. N 1:</p>
--	--	---

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱՊԻՒՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	<p>Բաղադրիչ 1- 20% (Միջանկյալ 1) Բաղադրիչ 2- 20% (Միջանկյալ 2) Բաղադրիչ 3- 60% (ամփոփիչ քննություն)</p>			
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով	Միջանկյալ գնահատման միավոր	
	18-20	Գերազանց		
	13-17	Լավ	Հարց 1	Հարց 2
	8-12	Բավարար	2 միավոր	2 միավոր
	0-7	Անբավարար		
	0	Չներկայացած		
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	<p>Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (20 միավոր) առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է սովորողի միջանկյալ և ամփոփիչ քննությունների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է վերոնշյալ բաղադրիչների հիման վրա:</p> <p>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:</p> <p>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝</p> <p>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ուստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևավորվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով:</p> <p>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական</p>			

	<p>անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.</p> <p>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.</p> <p>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:</p>
<p>ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	
<p>Ներկայություն</p> <p>Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ</p> <p>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ</p>	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:</p> <p>Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունն ենթադրում է ունկրնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:</p> <p>Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:</p> <p>Ինքնուրույն աշխատանքներն անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերն օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրն ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 Բռնության հասկացությունը և հատկանիշները (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Բռնության հասկացությունը 2. Բռնության սոցիալ-իրավական էությունն ու բովանդակությունը 3. Բռնության պատմաիրավական և համեմատական վերլուծությունը 4. Բռնության հատկանիշները 	<p>Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1, 4 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են մասնագիտական գրականությանը՝ նյութի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:</p>

Թեմա 2 Բռնության դասակարգումը և դրա տեսակները (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Բռնության դասակարգման հիմքերը 2. Բռնության տեսակները 3. Բռնության քրեորեն պատժելի և ոչ պատժելի դրսևորումները 4. Ընտանիքում բռնությունը 5. Բռնության տեսակների նշանակությունն իրավական գնահատական ներկայացնելիս 	<p>Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են մասնագիտական գրականությանն ու առկա մոտեցումներին՝ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար, իրականացնում են համեմատական վերլուծություն:</p>

Թեմա 3 Ընտանիքում բռնության հասկացությունը և տեսակները (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Ընտանեկան բռնության հասկացությունը 2. Ընտանեկան բռնության մեկնաբանությունն ըստ միջազգային և ազգային օրենսդրության 3. Ընտանեկան բռնության տեսակները 4. Ֆիզիկական բռնություն, դրա հատկանիշները 5. Սեռական բռնություն, դրա հատկանիշները 6. Հոգեբանական բռնություն, դրա հատկանիշները 7. Տնտեսական բռնություն, դրա հատկանիշները 8. Անտեսում, դրա հատկանիշները 9. Համակցված բռնություն, դրա հատկանիշները 	<p>Հարցեր 1- 9 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1 – 9 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են ազգային օրենսդրության հետ, դասախոսի կողմից նախապես ներկայացված իրավիճակային խնդիրներում տալիս խնդիրների լուծումները, ներկայացնում ընտանիքում բռնության և դրա առանձին տեսակներին վերաբերող օրենսդրական բացերը ՀՀ-ում և դրանց լուծման հնարավոր տարբերակները:</p>

Թեմա 4 Ընտանիքում բռնության քրեորեն պատժելի դրսևորումները ՀՀ-ում (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն

<ol style="list-style-type: none"> 1. ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված բռնության դրսևորումները 2. Ընտանիքում բռնության քրեորեն պատժելի տեսակների քրեաիրավական հակիրճ բնութագիրը 3. Ընտանիքում բռնության քրեորեն պատժելի ձևերի տարանջատումը միմյանցից 	<p>Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն: Հարց 1. Ինքնուրույն աշխատանք. սովորողները գրականության ուսումնասիրության հիման վրա վերլուծում են բռնության դրսևորումները, դրանք շրջանակն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի: Հարցեր 2-3. Ինքնուրույն աշխատանք. կատարվում է ընտանիքում բռնության քրեորեն պատժելի տեսակների ուսումնասիրություն տարանջատելով միմյանցից:</p>
---	---

<p align="center">Թեմա 5 Ընտանիքում բռնության իրավիճակը ՀՀ-ում (2 ժամ դասախոսություն)</p>	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Ընտանիքում բռնության դրսևորումները ՀՀ-ում 2. Ընտանիքում բռնության վիճակագրությունը 3. Ընտանիքում բռնության տարբեր դրսևորումների հարաբերակցությունը ՀՀ-ում 4. Ընտանիքում բռնության տարբեր դրսևորումների քանակական և որակական փոփոխությունները վերջին 5 տարիների ընթացքում 	<p>Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-4– ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող վիճակագրությանը, վերլուծում այն, մեկնաբանում միտումները:</p>

<p align="center">Թեմա 6 Ընտանիքում բռնության ենթարկված անձի իրավական կարգավիճակը և նրան տրամադրվող սոցիալական աջակցությունը (4 ժամ դասախոսություն)</p>	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Ընտանիքում բռնության ենթարկված անձ հասկացությունը 2. Ընտանիքում բռնության ենթարկված անձի իրավական կարգավիճակը 3. Ընտանեկան բռնության ենթարկված անձին տրամադրվող սոցիալական աջակցությունը, դրա տեսակները 4. Ընտանեկան բռնության ենթարկված անձին տրամադրվող սոցիալական աջակցություն տրամադրող մարմիններն ու կազմակերպությունները 5. Ընտանիքում բռնության ենթարկված անձի ուղղորդումը 6. Աջակցության կենտրոններ 7. Ապաստարան 	<p>Հարցեր 1- 7 – ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1- 7 – ինքնուրույն աշխատանք՝ սովորողներն ըստ խմբերի պատրաստում են ընտանեկան բռնության ենթարկված անձին տրամադրվող սոցիալական աջակցության պլան, որոշում են անձի կարիքները:</p>

<p align="center">Թեմա 7 Ընտանեկան բռնության ենթարկված երեխաների իրավական կարգավիճակի և նրանց տրամադրվող սոցիալական աջակցության առանձնահատկությունները (2 ժամ դասախոսություն)</p>	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն

<ol style="list-style-type: none"> 1. Ընտանեկան բռնության ենթարկված երեխայի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները 2. Ընտանեկան բռնության ենթարկված երեխային տրամադրվող սոցիալական աջակցությունը, դրա տեսակները 3. Խնամակալության և հոգաբարձության մարմինների դերակատարումն ընտանեկան բռնության ենթարկված երեխայի մասնակցությամբ դեպքերով 	<p>Հարցեր 1- 3 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1- 3 – ինքնուրույն աշխատանք՝ սովորողներն ըստ խմբերի պատրաստում են ընտանեկան բռնության ենթարկված երեխայի մասնակցությամբ դեպքերով երեխայի ուղղորդման և աջակցության ծրագիր:</p> <p>Սովորողները վերլուծում են խնամակալության և հոգաբարձության մարմնի գործառնությունները:</p>
---	--

<p align="center">Թեմա 8 Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերի քննության առանձնահատկությունները ՀՀ-ում (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)</p>	
<p align="center">Թեմայի հարցեր</p>	<p align="center">Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<ol style="list-style-type: none"> 1. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերի հարուցման հիմքերն ու առիթները 2. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերի նախաքննության առանձնահատկությունները 3. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերով զոհակենտրոն և երեխայակենտրոն մոտեցումների կիրառումը 4. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերով հարցաքննության և քննչական այլ գործողությունների առանձնահատկությունները 5. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերով փաստաբանների, մանկավարժների, հոգեբանների և այլ մասնագետների ներգրավվումը 6. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերով համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ 	<p>Հարցեր 1-6 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-6 – ինքնուրույն աշխատանք՝ սովորողները կազմում են քրեական գործի շրջանակներում այն քննչական գործողությունների ցանկը, որոնցով նախատեսում են առանձնահատկ մոտեցումներ, ուսումնասիրում են զոհակենտրոն և երեխայակենտրոն մոտեցումները և դրանց կիրառման հնարավորությունը ՀՀ-ում:</p> <p>Սովորողները մեկնաբանում են քննչական գործողությունները, դրանցում ներգրավված մասնագետների գործողությունների արդյունավետությունը:</p>

<p align="center">Թեմա 9 Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը և պաշտպանական միջոցների կիրառումը (4 ժամ դասախոսություն)</p>	
<p align="center">Թեմայի հարցեր</p>	<p align="center">Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<ol style="list-style-type: none"> 1. Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը 2. Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների տեսակները 3. Նախագուշացումը, դրա կիրառումը 4. Անհետաձգելի միջամտության որոշումը, դրա կիրառումը 5. Պաշտպանական որոշումը, դրա կիրառումը 6. Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության դադարումը՝ կապված քրեական գործի հարուցման հետ 7. Ընտանիքում բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելը և հաշվառումից հանելը 8. Անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ պաշտպանության միջոցներ չկիրառելը 	<p>Հարցեր 1- 8 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1- 8 – ինքնուրույն աշխատանք՝ սովորողներն ըստ խմբերի նախապատրաստում են ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը, մեկնաբանում են պաշտպանության միջոցների տարբեր տեսակները՝ հիմնավորելով դրա կիրառման անհրաժեշտությունը:</p>

Թեմա 10
Ընտանիքում բռնության կանխարգելումը ՀՀ-ում
(2 ժամ դասախոսություն)

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Ընտանիքում բռնության կանխարգելման հասկացությունը</p> <p>2. Ընտանիքում բռնության կանխարգելմանը ներգրավված մարմիններն ու կազմակերպությունները</p> <p>3. Ընտանիքում բռնության կանխարգելման ընդհանուր և հատուկ միջոցները</p> <p>4. Ընտանիքում բռնության կանխարգելման շրջանակներում միջազգային և ազգային համագործակցությունը</p> <p>5. ՀՀ ոստիկանության դերակատարումն ընտանեկան բռնության դեմ պայքարում</p>	<p>Հարցեր 1- 4 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1- 4 – ինքնուրույն աշխատանք՝ սովորողներն ուսումնասիրում են ընտանիքում բռնության կանխարգելման առանձնահատկությունները, ներկայացնում են ընտանիքում բռնության տարբեր տեսակների կանխարգելման համար կիրառվող հատուկ միջոցներ:</p>

Հարցաշար

«Ընտանիքում բռնության կանխարգելման իրավական հիմքերը» առարկայի առաջին միջանկյալ քննության

1. Բռնության հասկացությունը
2. Բռնության հատկանիշները
3. Բռնության դասակարգման հիմքերը, բռնության տեսակները
4. Ընտանեկան բռնության հասկացությունը
5. Ընտանեկան բռնության մեկնաբանությունն ըստ միջազգային և ազգային օրենսդրության
6. Ընտանեկան բռնության տեսակները
7. Ֆիզիկական բռնություն, դրա հատկանիշները
8. Սեռական բռնություն, դրա հատկանիշները
9. Հոգեբանական բռնություն, դրա հատկանիշները
10. Տնտեսական բռնություն, դրա հատկանիշները
11. Անտեսում, դրա հատկանիշները
12. Համակցված բռնություն, դրա հատկանիշները
13. Ընտանիքում բռնության դրսևորումները ՀՀ-ում
14. Ընտանիքում բռնության տարբեր դրսևորումների հարաբերակցությունը ՀՀ-ում

Հարցաշար

«Ընտանիքում բռնության կանխարգելման իրավական հիմքերը» առարկայի երկրորդ միջանկյալ քննության

1. Ընտանիքում բռնության ենթարկված անձ հասկացությունը
2. Ընտանեկան բռնության ենթարկված անձին տրամադրվող սոցիալական աջակցությունը, դրա տեսակները
3. Ընտանեկան բռնության ենթարկված անձին տրամադրվող սոցիալական աջակցություն տրամադրող մարմիններն ու կազմակերպությունները
4. Ընտանեկան բռնության ենթարկված երեխայի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները
5. Խնամակալության և հոգաբարձության մարմինների դերակատարումն ընտանեկան բռնության ենթարկված երեխայի մասնակցությամբ դեպքերով
6. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերի նախաքննության առանձնահատկությունները
7. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերով հարցաքննության և քննչական այլ գործողությունների առանձնահատկությունները
8. Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը և պաշտպանության միջոցների տեսակները
9. Նախագուշացումը, դրա կիրառումը
10. Անհետաձգելի միջամտության որոշումը, դրա կիրառումը
11. Պաշտպանական որոշումը, դրա կիրառումը
12. Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության դադարումը՝ կապված քրեական գործի հարուցման հետ
13. Ընտանիքում բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելը և հաշվառումից հանելը
14. Անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ պաշտպանության միջոցներ չկիրառելը

Հարցաշար

«Ընտանիքում բռնության կանխարգելման իրավական հիմքերը» առարկայի կիսամյակային քննության

1. Բռնության հասկացությունը
2. Բռնության սոցիալ-իրավական էությունն ու բովանդակությունը
3. Բռնության հատկանիշները
4. Բռնության դասակարգման հիմքերը, բռնության տեսակները
5. Բռնության քրեորեն պատժելի և ոչ պատժելի դրսևորումները
6. Ընտանեկան բռնության հասկացությունը
7. Ընտանեկան բռնության մեկնաբանությունն ըստ միջազգային և ազգային օրենսդրության
8. Ընտանեկան բռնության տեսակները
9. Ֆիզիկական բռնություն, դրա հատկանիշները
10. Սեռական բռնություն, դրա հատկանիշները
11. Հոգեբանական բռնություն, դրա հատկանիշները
12. Տնտեսական բռնություն, դրա հատկանիշները
13. Անտեսում, դրա հատկանիշները
14. Համակցված բռնություն, դրա հատկանիշները
15. ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված բռնության դրսևորումները
16. Ընտանիքում բռնության քրեորեն պատժելի տեսակների քրեաիրավական հակիրճ բնութագիրը
17. Ընտանիքում բռնության քրեորեն պատժելի ձևերի տարանջատումը միմյանցից
18. Ընտանիքում բռնության դրսևորումները ՀՀ-ում
19. Ընտանիքում բռնության տարբեր դրսևորումների հարաբերակցությունը ՀՀ-ում
20. Ընտանիքում բռնության ենթարկված անձ հասկացությունը
21. Ընտանիքում բռնության ենթարկված անձի իրավական կարգավիճակը
22. Ընտանեկան բռնության ենթարկված անձին տրամադրվող սոցիալական աջակցությունը, դրա տեսակները
23. Ընտանեկան բռնության ենթարկված անձին տրամադրվող սոցիալական աջակցություն տրամադրող մարմիններն ու կազմակերպությունները
24. Ընտանիքում բռնության ենթարկված անձի ուղղորդումը
25. Աջակցության կենտրոններ
26. Ապաստարան
27. Ընտանեկան բռնության ենթարկված երեխայի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները
28. Խնամակալության և հոգաբարձության մարմինների դերակատարումն ընտանեկան բռնության ենթարկված երեխայի մասնակցությամբ դեպքերով
29. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերի հարուցման հիմքերն ու առիթները
30. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերի նախաքննության առանձնահատկությունները
31. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերով զոհակենտրոն և երեխայակենտրոն մոտեցումների կիրառումը
32. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերով հարցաքննության և քննչական այլ գործողությունների առանձնահատկությունները
33. Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերով փաստաբանների, մանկավարժների, հոգեբանների և այլ մասնագետների ներգրավվումը
34. Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը և պաշտպանության միջոցների տեսակները
35. Նախազգուշացումը, դրա կիրառումը
36. Անհետաձգելի միջամտության որոշումը, դրա կիրառումը
37. Պաշտպանական որոշումը, դրա կիրառումը

38. Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության դադարումը՝ կապված քրեական գործի հարուցման հետ
39. Ընտանիքում բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելը և հաշվառումից հանելը
40. Անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ պաշտպանության միջոցներ չկիրառելը
41. Ընտանիքում բռնության կանխարգելման հասկացությունը
42. Ընտանիքում բռնության կանխարգելմանը ներգրավված մարմիններն ու կազմակերպությունները
43. Ընտանիքում բռնության կանխարգելման ընդհանուր և հատուկ միջոցները
44. Ընտանիքում բռնության կանխարգելման շրջանակներում միջազգային և ազգային համագործակցությունը
45. ՀՀ ոստիկանության դերակատարումն ընտանեկան բռնության դեմ պայքարում